



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՐԺԱԼՈՅՑ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ո՞ՅՍ. — Ո՞րքան գեղեցիկ, սիրելի, կարեւոր և զերազանց բան. անդրանիկ յարարածն Աստուծոյ, ըստ Ս. Գրոց, և ամենայն զգալի արարածոց երեւցընող. իսկ աներեւոյթ բանական արարածոց՝ զրեթէ գոյութիւն իսկ. զի միայն լուսով երեւակայութիւն և բացա-

տրուին: Երեւելեաց և աներեւութիւն Արարիչն անգամ՝ վկայուի «Բնակեալ ի Լոյս անմատոյց»: որ և ինքնին ի մարմանալն և յերեւել յերկրիս վրայ՝ վկայեց իրեն համար, «Ես Լոյս՝ յաշխաղիս եկի»: Դարձեալ,

ինքն որ ազրիւր էր կենաց և եկաւ ի մէջ մահկանացուաց՝ նոր և անմահ կեանք մի տալու, զնոյն եւս Լոյս կոչեց, իր սիրաը չօշափող աշկերտին բերնով. «Նովաւ կեանք էր, և կեանքն էր Լոյս մարդկան»:

Զայս այսպէս ճանչնալով իր նախիլն հաւատացեալքն, իր վարդապետութիւնը լողք ուողք և ուսուցողք, Լոյս, Լուսառորդիւն, Լուսատր կրօնք անուանեցին գիրիստոնեռորիմ. որպէս և է իսկ, քան զամենայն դիտութիւն ստոյգ և պայծառ, մայուն և յափտենական. որյ առջև այլ ամենայն զիտութիւնք և գիտք՝ որոց այնքան հետամուտ են մարդիկ, ոչ միայն փոքր ինչ են, այլ և չնչին, կամ շուրջ մի, որ և այն չքանայ. նախ, ի վախճանի իւրաքանչիւր անձին, ապա ի վախճանի առհասարակ մարդկութեան և այս աշխարհիս. և մայ միայն Լոյսն կենդանի և կեանքն լուսաւոր, յաշխարհ իսկալոյս, որ Արարիչն բնակի, իրեն լուսաւորեալ սիրելոքն:

Մի զարմանար, ընթերցող, եթէ ազգիդ քրիստոնէական հաւատոց ծագութեալ և առումն ուզելով յիշել՝ զԼոյս նախակարգեցի, և Արշալոյս համարյիմ անոր առաջին երեւոյթին և սփոխին յերկրի և յազգի մերում: Եթէ զարմանալու բան մի կայ՝ այս է, որ գարձեալ, ըստ ծանր և աշաւոր բանի Փրիստոսի, ինքն Լոյսն իսկական եկաւ յաշխարհ, 13

և « Ալրեցին մարդիկ զիսււար՝ առաւել քան զըսոյ » : Այսինքն, մարդիկ հասարակորէն աւելի սիրեն երկաւոր անցաւոր բաներ փնտուել ճանչնալ՝ քան զիարեւորագոյնն, զնշմարիտ Լոյսն, զկրօնքն, որ պիտի ըլլայ իրենց ասիթ յախտենական կենաց :

Եթէ պարզապէս այս գերազանց լուսոյ հանգամանքն և հետեւանքն յերկրիս վրայ՝ ուղինք ճառել, գա քրիստոնէական հաւատոց վարդապետութիւն կ'ըլլար . ամենակարեւոր բան, բայց ոչ այս տեղ մեր քննելին և նպաստակն . այլ զի, ինչպէս ոչ ամենայն մարդիկ և ազգք՝ ոչ ի մի ժամանակ և մի տեղ լուսաւորուած են քրիստոնէութեամբ, և շատերուն երբն և սկիզբն՝ մութ և անստոյդ է, այսպէս և մեր Հայոց ազգին . զոր և ճանչնալ այնքան կարեւոր է՝ որքան որ այսպիսի լուսաւորութիւնն յերկրիս՝ անրաժան կամ հաղորդ է երկնաւոր լուսաւորութեանն . թող որ կարեւոր պատմական արժէք ունի զիտնաց :

Հասարակորէն մեր ազգի լուսաւորութեան սկիզբն և շարունակութիւնն՝ զրեթէ Դ դարու սկիզբէն ճանչցուփ . սակայն նախընթաց երեք դարուց մէջ այլ նշմարուին նշոյլք ինչ լուսոյ քրիստոնէութեան ի Հայս, զոր ուզեցի կոչել Այրազոյս, և զիտեւեալո՞ն որ ի ձեռն Ս . Գրիգորի՝ արժան է կոչել Այրեւելք, լոյս՝ համասփեւ ի Հայս . որք՝ թերեւս արդարագատ և երախտագէտ քան զայլ ազգս՝ զինքն իրենց լուսաւորիչ անուանեցին և այնպէս ծանուցին օտարաց : Այդ աստուածաշնորհ անձին Շատաշիզբ, մարմանաւոր և հոգեւոր Որդիկէն և Թոռունք, ասուազյթելով անոր վառած լոյսը հրաշալիք պարագայ մի քրիստոնէութեան հաստատեցին . զոր մտադրութեամբ քննելով ստիպուիմք լսել, թէ « Ոչ այսպէս արար Տէր՝ ամենայն ազգաց » : Այս մտածութեամբ աւելի վերանալով՝ զայել և հարկ է մեզ ճանչնալ (օտար զիտունք և տգէտք ինչպէս կ'ուզեն դատեն), վայել է մեզ ճանչնալ՝ աստուածային յատուկ նախախնամութիւն մի մեր սեփական հայրենեաց վրայ, յառաջ քան շատ և թերեւս ամենայն ազգաց ...

Անշուշտ այս խօսքս վերացընէ տանի մեր միտքը մինչեւ ի սկիզբն մարդկութեան, ի գուռն զրախտին . այլ և յերկրորդ որրան

մարդկութեան, յետ համայնսաջինջ զըհեղեղին, ի լերինս Արարատայ, ուր յետ տարեկան ժիանացն դաղլեցաւ մարդկակիցոյց տապանն : Բազմաբնին՝ և աւելի բազմագրիշ զիտնականք ժամանակին՝ ինչ այլ ճառեն և նարեն ասոնց նկատմամբ, քանի որ Եփրատայ և Տիգրիսի ակունքն՝ իրենց գետակցօքն ի Հայս են, և Արարատ հօն կանգնի բարձրագույն ի միջի լերանց արեւմուեան Ասելյ, Հայն կըրնայ միշտ մարդկութեան առաջին և երկրորդ ծագման և ամման կենդրոն ճանչնալ իրեն սեփականեալ աշխարհը, և պարծիլ . ոչ այխարհական կամ սամկական պարծանօք, այլ իրեւ կարեւոր մասն աստուածածանօթութեան և չնորհապարտութեան առ Աստուած . որ այնքան բաժանեալ խանիխուռն ազգաց և այնքան կորատեալ երկրի մասերէն, մեր յատուկ երկրի վրայ՝ կանքիեր ցուցեր է իր անքնին կամաց նշանը : Զի, եթէ ամենայն ազգի ամէն խոհական մարդու վայել է քննել զիտնալ, թէ՝ այնքան ազգաց առասպելեալ կրօնից մէջ, որ կէտն էր՝ ուր նախ և յետոյ ճշմարիտ կրօնք ծագեր, երեւցեր և պահուեր է, մեզ եւս պարագ է, և առաւել եւս, վասն առաւել հաւանականութեան մեր երկրիս :

Արդ, առանց երկարաբանութեան, որ թերեւս օտարուտի իմն երեւի ժամանակիս իմաստնոց և իմաստակաց, մենք կրօնական և պատմական զկացմամբ՝ համարձակիմք ըսել, թէ՝ Աստուածածանօթութեան երեք կենդրոնը կամ կէտք՝ ըստ երից կրօնական յեղանակաց մարդկութեան, (Բնական, Գրաւոր և Քրիստոնէական օրինաց), եղեր են, որ և է տեւողութեամբ, Հայսաստան, Հրեաստան և Հառեաստան : Առաջինն՝ յայտնի է վերեւ ըսածներէս . երկրորդն՝ յայտնագոյն, Արքայանաւ, Մովսիսի, մարգարէից, և յետոյ ինքնին Քրիստոսի Աստուածամբորդոյն զալըստեամբն . իսկ երրորդն՝ իր երեսփառան Առաքելոյն և անոր յաջորդ քահանայապետից աթոռն ի Հոռովմ հաստատելով . ուր՝ անընդհատ ի Քրիստոսէ մինչեւ հիմայ ճանշուքն երեւելի զւուկը և վարդապետագ քրիստոնէութեան : Այսափառ բաւական համարմք մեր տեսութեանը բացատրութեան, բայց կարեւոյն և անոր յաջորդ քահանայապետից աթոռն ի Հոռովմ հաստատելով . ուր՝ անընդհատ ի Քրիստոսէ մինչեւ հիմայ ճանշուքն երեւելի զւուկը և վարդապետագ քրիստոնէութեան : Այսափառ բաւական համարմք մեր տեսութեանը բացատրութեան, բայց կարեւոյն և անոր յաջորդ քահանայապետից աթոռն ի Հոռովմ հաստատելով . ուր՝ անընդհատ ի Քրիստոսէ մինչեւ հիմայ ճանշուքն երեւելի զւուկը և վարդապետագ քրիստոնէութեան : Այսափառ բաւական համարմք մեր տեսութեանը բացատրութեան, բայց կարեւոյն և անոր յաջորդ քահանայապետից աթոռն ի Հոռովմ հաստատելով . ուր՝ անընդհատ ի Քրիստոսէ մինչեւ հիմայ ճանշուքն երեւելի զւուկը և վարդապետագ քրիստոնէութեան :

մթընցեր է սնոսի պաշտամամբք, սակայն քրիստոնէութիւնն չէ ոռշացած անոնց վրայ կամ անոնց տեղ՝ ծագել իր մշտափայլ լոյսը և ընծայել զԵկեղեցին Հայոց :

Ա.

Արագին լոյս կամ մուտք քիչատոնէութեամ ի Հայու .

Որշափ այլ կարծիական է, սակայն իրբեւ լոկ աւանդութիւն եւս յիշելի է. թէ, քրիստոնէութեան զէթ համբաւն՝ շատ կանուի՝ հասեր է ի Հայու, և նոյն իսկ գեր Քրիստոսի տնօրէնութիւնքն ըոլորովին չկատարուած, որ է ըսել յառաջ քսն զիսաշելութիւնն. և այս համարէ թէ աւանդեալ Արքարու գեսպանութեամբ և թղթակցութեամբ ընդ Քրիստոսի, զոր բոլորովին անհիմն և անհաւատալի չեն դատեր ոչ սակաւ հին և նոր զիտնականք, թէպէտ մենք այլ զԱրդար աւելի Ասորոց թագաւոր համարիմք և ոչ Հայոց. նոյնպէս և այն աւանդութիւնն, թէ՝ Քրիստոսի վերջի օրերում հեթանոսաց ումանց գալն և առաքելոց լսել՝ թէ «ԶՔրիստոս կամքեց տեսանել», ավենարիկ Արքարու գեսպանութեան՝ Թողղով զառնք այլ, եթէ որ է է կիրազով Քրիստոսի համբաւն յԱսորի հասեր էր, անկէ ի Հայու քայլ մի է. մանաւանդ թէ մեր ազգայնոց բազմաշղիկ լՍալն՝ զիտորապէս վաճառականութեան առթիւ, և այն ատեն Հառվիմյեցոց հետ յարաբերութիւնն, անտարակոյս կ'ընէ այլպիսի համբաւոյ հնչեն ի Հայու. Թողունք ուրիշ ազգային մասնական աւանդութիւն մ'այլ, թէ Քրիստոսի երկրպագու և շնծայաբեր Մոռք բերին այդ համբաւը, և ամանց համբարին՝ թէ մի ի մոգուցն՝ Գասպար, էր ի Մոկաց գաւառէն, և թէ ոչ սակայն ի Մոկա աւանի թաղուած կ'լսեն և ցուցընէին զերեզմանը հին եկեղեցւոյ մի մէջ. Ասոնք որքան և աւանդութիւն և զոյցք համարուին, ստոյգն է՝ ոչ միայն Հայոց երթեւեկն ի Պաղեստին և յԵզիդատոս՝ այն ատեններ և յառաջ և յետոյ. այլ և հաւանական իրենց երկրին չորս կողմը տարածուին այսպիսի և նման համբաւոյ մեծ դիպաց. և այս լստ մէջերկից զրից մեր

երկրին. զոր՝ և Ասիայ արեւելից և արեւմտից աշխարհաց և ճանապարհաց միջավայր ճանչնան զիսաւոր աշխարհագիրը ժամանակին. ԶԱրքար հայացընող՝ անունն այլ հայացընեն Աւագ այր կոշերով. գուցէ աւելի ստոյդ ըլլայ միւս աւանդութիւն մի, որ Արքարու քոյր կամ քեր գուստոր մի ճանչնայ Աշագունի կամ Շգունի անուամբ ի Մեծ Հայու, հաւատացեալ ի Քրիստոս և նահաւակիսոլ:

Բ.

Թաղէոս եւ Աշակերտաք իւր.

Քրիստոնէութեան համբաւը տարածողք ի Հայու անմիջապէս յետ յարութեան Քրիստոսի, համարուին ի Հայու և ի սահմանակիցն Հայոց բակեալ կամ պանդուխտ Հրեայն, որք ի Հոգեգալըսաեան օրը գտուեցան յԵրուաղէմ. յորս՝ թէ յանուանէ չի յիշեր Աւետարանին Պուկա (Բ. 9-11) և զՀայու, այսինքն զհայաբնակ Հրեայս, գուցէ քիչ առաջ մեր այն ատենուան Հայ թագաւոր ըին զՀրեայս հալածելուն կամ նեղեուն համար ըլլայ, (Խոր. Բ. ի Դ). սակայն յիշե նախ զսամանակիցն Հայոց, Մարս, Միջագետացիս, Կապպագովլացիս, Փոխացիս. գուցէ և Պարթեաց անուամբ իմանայ և զՀայու. զի այն ատեն համացեղ (Արցակունի) էին և Հայոց և Պարից կամ Պարթեաց թագաւորքն. անկարելի էր որ այսքան Հայաւանի կպաս աշխարհներում պանդուխտացեալ Հրեայն այլպիս՝ յետ զատկի տօնին դառնալով յԵրուաղէմէ, սփուծ չըլլան և ի Հայու զհամբաւ Քրիստոսի և Առաքելոցն. յորոց լսեցին այն հրամալի Ա. Հոգեւոյ իմանն օրը՝ իւրաքանչիւր իրենց պանդուխտած երկրին և ազգին և իրենց հսկ խօսած լցուն:

Ոմանք համարեցան թէ Տերտուղիանոս (յիւ Բ. գորու ընդդէմ Հրէից, Ե) յիշած է և զՀայու յանուանէ, Պուկասու միւս յիշելոց և զետ գտուելոց այն հրաշափառ վերատան մէջ. սակայն, հաւանորէն, այս մեծ հեղինակն՝ իր ժամանակի Հայոց քրիստոնէութիւնը յիշեցընէ, խառնելով անունը ընդ մէջ Միջագետացեաց և Փոխացուց, ուր որ մեր թարգմանութիւնն ըստ

յոյն բնագրին ի Հյեւատակի դրած է, և նու զայշ չի յիշեր, այլ ի Հայաստակի, զոր ըստ նմանութեան անուանցն՝ կրնար շփոթել հայերէն զրող մի. կըրնար շփոթել և Տերտուղիանոս՝ եթէ հայերէնը կարենար կարդալ, և այն ատեն հայերէն դիր ըլլար : Այս է Տերտուղիանոսի դրածն . «Որո՞ւ» (բայց եթէ Գրիստոռի) հաւատացին այլեւայլ ազգք. Պարթեւք, Մաքք, Ելումացիք, և որք ի Միջագետս և ի Հայաստան, ի Փոխգիտաց : և այլն :

Մեզ և մեր պատմըչաց՝ Արգարու և Թագէռ առաքելոյ քարոզութեան պատմութեան աղրիւն՝ եղած է թուղթ Արգարու կոչուած հին ասորերէն զրուած մի, որոյ հեղինակը չի յիշեր Եւսերիսու. իսկ մեր Խորենացին կոչէ Ղըրուրնակամ՝ Ղերուրնեա (սխալմամբ զրուած Ղերուրնա), որդի Ավշագարոյ Դապի, որ դրած է, Կ'ըսէ, և Վանատրկոյ ատեն եղած դիպաց պատմութիւնն, և դրած ի դիւանն Եւզեփոյ : Մինչեւ ցիէս նոր անցեալ կամ դեռ անցնող (ՃՓ) դարու՝ այսափ գիտէրնք. յաւ մին 1852 յաջողեցաւ մեզ գտնել Բարիկու մեծ զրատան Հայերէն ձեռագրաց հին Ճառընտիր մի մէջ՝ այս Արգարու թուղթս, հին թարգմանութեամբ, յորմէ մեր Հնադոյն Տօնացոյց կամ Ճաշոց այլեւայլ մտո կարդեր են եկեղեցոյ մէջ կարդալ: Իրը տասն տարի մեզմէ վերին՝ անզիշացի բանասէրն Գիւրդյոն գտաւ ասորի բնագիրը, այլ ոչ ամբովզ, և հրատարակեց. մենք այլ մեր գտած երկարը, որ և փուանկերէն թարգմանեալ հրատարակեցաւ: Ասոր մէջ՝ Ղերուրնա ոչ որդի Ավիշագարայ, այլ թոռն նորա Կ'ըսուի, իսկ հայրն Ավանի կոչուի. քարոզի առաքեալն այլ ոչ Թագէսս՝ այլ Այդէս. որ շուր լուսաւորութեան Եղեսիոյ՝ Կ'ըսուի զնացեալ յԱրեւելու և նահատակեալ ի Սանսարիոյ. ասոր դստերն Սանդըխտոյ և իր նահատակութեան պատմութիւնն չկայ հիմայ գտնուած Ղըրուր-

նայ գործոյն մէջ, որոյ հայ թարգմանիչն՝ աեղ աեղ ազգային աւանդութեանց և ժանօթութեանց յարմարցուցեր է, Թագէի կամ Ազգէի աշակերտ՝ Արգարու խոյրարարն այլ նոյն անուամբ կոչուելով՝ երկուքին ըրածն այլ կըրնայ իրարու խաւուած ըլլար: Բայց մեզ ժանօթ Թագէսսի քարոզութիւնն յարեւելու ի Մեծ Հայո, աշակերտելով զիյանդուիս և երկուքին այլ նահատակութիւնն ստոյգ երեւին, և առանձին զրուած գտնուի պատմութիւնն մեր Հնադոյն ձեռագրաց մէջ. որոյ թարգմանովն յամուէլ եպիսկոպոս որ պատուիրէ զայն ժաւալել և ժանօթացընել ամենայն Հայոց ազգին, թուի անոր կաթողիկոսն, թէ ոչ Շնորհ Հակաթոռն Մեծին Սահակայ՝ ապա Սամուէլ յաջորդն Յարգենի, ի սկիզբն Զ գարու :

Ասուաւածային նախախնամութեամբ այլեւալլ Արաքեալք և Աշակերտք եկած են ի Հայո, կենսաբեր Աւետարանը քարոզելուն. յօրս առաջին յիշտատակէ մեր եկեղեցին՝ ի պաշտաման պատարագի՝ զայ Ա. Թագէռու, կանուխ քան զիարքողունեսու առաքեալն՝ ի Հայս մանեղուն համար. զի սա յետինն մի յերկուուասն ձեռաստուն Առաքելոց Գրիստոսի է, իսկ Թագէռու համարի մի յեօթանաստուն և երկու աշակերտաց նորա. զոր՝ Հայք սիրեն անոնց ամենուն զլուխ կամ առաջին ըսել, որպէս զՊետրոս՝ Երկուտասանիցն : Դարձեա, Թագէռու համարուի հարազատ եղացը թովմայի Արաքելոյ, և ասոր թելադրութեամբ եկած առ Արգար, իրբու կատարելու աւան գութեամբ հոչակեալ Գրիստոսի խոստութ առ նա, թէ, յետ համբառնալու յերկին՝ խարեմ քեզ թժկող և լուսաւորոց մի յաշակերտաց : Ստոյգ է Թագէսսի շուտով գալն իր քարոզութեան մեղը, որ շըր հեռէ ի Պաղեստինէ. բայց սամանք Կ'ըսեն, թէ նա նախ Սոսորոց ծովեղերէն ելած ըլլայ յեղերտ Ալիկիոյ, և ասոի յառաջ անցած ի միջաշխարհ Փաքք Ասիոյ, և ասոր զիսաւար

1. Cui enim et alii gentes crediderunt? Parthi, Medii, Elamite, et qui inhabitant Mesopotamiam, Armeniam, Phrygiam, Cappadociam, et incolentes Pontum et Pamphyliam; immorantes Aegyptum et regionem Africæque et trans Cyrenem inabitantes: Romani et incole; tunc et Hyer-

salem, Indi, et ceteræ gentes; ut jam Getulerum varietates et Maurorum multi fines; Hispaniarum omnes termini, et Galliarum et diverse nationes, et Britannorum inaccessa Romanorum loca, Christo vero subdita, et Sarmatorum, Germanorum et Scytharum.

քաղաքին՝ կեսարիոյ մէջ յաջորդւթեամբ քա-
րոզած, և հաստատած եկեղեցւոյ նախապա-
տիւ աթուոց մէկը, զոր և յանձներ է իրեն
աշակերտաւլ թեկիլուսի. և զսա համարին
այն բարեբազզ անձն կամ բայն, որոյ խնդրով
Ա. Պուկաս գրեց իր Աւետարանն և դՊործու
Առաքելոց. բայց ասոր վրայօք յետոյ խօ-

սինք, երբ մեր Լուսաւորչի ձեռնազրութիւնը
յիշելու կարգն զայ:

Ժամանակին հնութիւնն և երկրին հե-
ռաւորութիւնն, զուցէ և Ասորոց և Հայոց
մէջ եղած նախանձ և հակառակութիւն մի,
որում վկայեն պատմիչք մեր, զուցէ կա-
մաւ և ակամայ այլայլած ըլլան Թագէնոս



Սբրութի Սամելուկաս.

առաքելու թեան պատմութիւնը: Ասորիք՝ յետ
անոր քարոզութեանն յԵղեսիա և Արգարու
հաւատոցն՝ Կինուէի և Ասորեստանի սահ-
մանակից կողմեր այլ քարզած է՝ Կ'ըսեն,
Թագէսս, և նորին դառնալով յԵղեսիա՝ իսա-
զազական մահուամբ հանգչած, ըստ Մարիսի
պատմըշի նոցա, յետ 22 տարի քարոզու-

թեան: Իսկ Հայք՝ յԵղեսիոյ ի Մեծ Հայու
գնացեր է, Կ'ըսեն, Արգարու յանձնարար
թզթով առ Սանատորուկ թագաւոր: Երկու
աւանդութիւնքն այլ թերեւս անստոյդ են.
սոնցն երեւի՛ թէ ոչ Թագէնոսի՝ այլ իր մէկ
ակերտին (որ իր անուամբ ճանչցուած է)
գալն ի Հայսաստան և յարբունիսն, ուր թա-

գաւորէր՝ ըստ մեր պատմչաց՝ Սահաստրովկի՝ Ըստ վերոյիշեալ հին պատմութեան թագէի կամ վկայորանութեան նորա և Սանդըխտոյ զստեր թագաւորին, Թագէոս՝ իր քանի մի այսկերտք քարոզելով և հրաշագործութեամբ՝ շատերու ընդունել կու տառ զքրիստոնէսթիւն իւն զայ յԱրտազ զաւառ, ուր այն եղանակին՝ որ ամառ էր, թագաւորին նատէկ իր արգունեօք՝ ի Հաւարջան քազաք քազիւզ, զօրքն այլ դաշտին մէջ բանակած։ Ըստ օմանց՝ Սահաստրուկ այլ նախ Հաւատայ՝ ի Վրիստոս, յետոյ ուրանայ. Հաւանելի է միշտ էկթանոս մեան. այլ իր օրիորդ գուստոն Սահեղարտ հաւատայ և մկրտուի ի Թագէսոսի, և սիրով փափազի ստէկ լսել առտքելոյն քարոզութիւնը. որով շատ ազնուատուհմ արք և կանաք եւս Հաւատացին ի Վրիստոս, և անարգէցին իրենց սնոտի պաշտամունքը։ Ասկէ զրդուած քուրմիք բոլորեն առ «Խաստերախ և անօրէն» թագաւորին, որ հրաման տայ ջարդել Հաւատացեաները, և բանտարկել զՍանդուխտ. զոր յետոյ ստորդ հայրական սիրով ողոքելով զգուշելով՝ լսանայ, և այլ չի կըրնար մոլորցնել. գութն գտանայ ի հաւատութիւն, և հրամայէ սպաննել զնա։

Հատ հրաշներ յիշէ պատմին. որոց մին էր, դահնաց՝ փոխանակ Սանդըխտոյ՝ զիրար զարնել և սպաննել. իսկ զիյոյն՝ զրորդական կերպով մի նահաստակուած կ'ըսէ. դահնաց կոտորման շփոթին մէջ, «Փատանի ուն էառ և սուր և մօս ի ստինսն եհար զկուրծսն եւ՝ «բանելոյ կուսին, և ել արիւն, և րջիսեաց և հոտ անուշութեան, և աւանդեաց զօդին¹⁾։ Գեղեցին կատարած, գեղեցիկ զրուցուած, զեղեցկագոյն պսակ եկեղեցւոյ Հայոց. որ կըրնայ պարտի իր Ս. Օրիորդով, զուցէ առաջին վկայութիւն ունելով զԱ. Սանդուխտ։ Իր պատճառու՝ առաջ և վերջը շատեր նահաւ տակիցնան իր գտանացեալ հօր հրամանաւ. յորոց յիշուին յանուանէ՝ իշխան մի, զոր

1. Դեկա. ամոյ 15ին, ըստ վկայորանութեանն։

2. Մեր մէկ հին ժամանակագրի՝ Թագէի նահատակութեան յատուկ տեղը՝ թագառ կոչէ։

3. «Քեւ պարծի այսօք սուրբ եկեղեցի, ով վկայուի Սուրբ Սանդուխտ. որ զհայրականն քա թողեր զպաշտօն, վասն Վրիստոսի հեղեր զարիւն քու սուրբ։

դրէիր էր թագաւորին զրուաստը յուրացութիւն յորդորելու համար, և նա՛ հրաշներ տեսնելով՝ հաւատաց ի Վրիստոս, և մկրտուելով կոչուեցաւ Սամոնէլ, և նահաստակիցաւ թագաւորին հրամանաւ. հրացեալ երկաթներ ուներուն կամ ուսերուն անցընելով. — ուրիշ մէկ մ՛այլ իսրայէլ կոչուած. — Զարման դուխտ անուամբ թագաւորական ցեղէ տիկին մի՛ նոյնպէս Սանատրիկյ հրամանաւ սրով սպանակեցաւ. Ըստ պատմութեան՝ թագէսս ինքն օգնութեամբ հաւատացելոց թաղէ զՍանդուխտ և ծածկէ զտեղին. իսկ ինքն յետ վեց կամ ութ աւուր այն տեղուցն մօտ բարձրաւանդակի մի փրայ²⁾ տարուի սպանուելու. զակն անզամ այլ փոխանակ անոր՝ իր Զնեմենա եղրայը զարնէ և սպաննէ, զոր յարուցանէ առաքեան և մկրտէ. սպահաւատացելոց առաջնորդ զնելով իր Զարարիա աշկերտը, նահաստակուի սրով. և մորմինն՝ սպաննելիօք պատուած ժայռի մի մէջ ծածկուի. Մեր որբապատումք զրած են զայտութիւն այս ամէն յիշեալ նահատակաց, Առաքելոյն, կուսին և այլոց, և մարմնոց գըտնուին՝ հրաչալի յայտնութեամբ, և զարուն վերիւրը, Յովկաննէս Մանդակունի կաթողիկոսին և քաջ Վահնայ Մամիկոննենի իշխանութեան առեն, կիրակոս անուամբ ճգնաւորի մի ձեռօգ. որ՝ անշուշտ այն տեղ շատ անզամ կու նկատէր քիչ տասնեակ տարիներ առաջ կատարուած Վարդանաց համարումբ նահատակութիւնն և նշխարքները. Վկայարանութիւնն թագէի և Սանդըխտոյ, զերացոյն հօր և գտակը, անմահունակ զորունք մի ընծայէ. յար և նման աւանդեալ զորովանաց ժամանակակից սրբուհի օյ թեկ-զեայ ընդ Պալոսի տապելոյ. Մեր եկեղեցին այլ ի միամին տօնէ զաշակերտեալ նորա կոյսն, երեք տուն գետեակ շարական մի³⁾ եւս ընծայելով իր անդրանիկ վկայուէւայն։

Աշակերտեալ Առաքելոյն Թագէսսի և ի հաւատաս չմարդի հաստատեցար, ոչ խառնակեալ ընդ հիմեանստական պաշտօնն. արժանի եղեց վերանալ առ Հայր. Որ զարկեանթեանն քաղցկեր բողոք զփառ, և սուսածածութեանն փառքն զարդարեցար. այսօք դաշտակեր ընդ զարմաթաւն երկնից, վասն մեր առ Տէր բարեկոսեան ॥!

Թադէսոի և Սանդըխտոյ նահատակութեան օրերում՝ եղած հրաշքները տեսնող հաւատացելոց թիւն, որ այեւեալ անգամ մանրամասն նշանակուած է ի վկայաբանութեանն, իրեւ թիւր մի կ'ըլլայ. բայց աւանդութիւնն կ'ըսէ Առաքելոյն համար, որ առաջ չատ տեղ քալած քարոզած էր և թիւրաւորներ այլ մկրտած. որոց ոչ սակաւք նահատակուեցան՝ Անաստրկոյ և իր նմանեաց հալածանօք. և ոմանց յիշատակն եւս մտած է ի Յայսմաւուր մեր. ինչպէս, «Ամառուիլի իշխանի՝ աշակերտին Թադէքի», (յուլիս 20). — Զարարիայի՝ որ յաջորդ Թադէսոի կոչուի, թէ և շմբ հանդիպած յիշատակին ի Յայսմաւուր այլ վկայի յի յայլոց՝ որ ըստ նախագուշակութեան Առաքելոյն՝ ինքն այլ նահատակուած է Երուանդ բռնաւոր թագուորին հրամանաւ կամ իր ատեն, իր 75-6 թուականին Քրիստոսի: Առաքէլ գանձասաց բաղչեցին՝ իր Ասկեանց գանձին մէջ յիշէ զա։



Նահատակութիւն Ս. Սամոյլիսոյ .

«Եւ այդ բազումը ասու նաւատացին, Հարարիա և ընկերը մորիմ!»:

Մեր կանոնազրոց մէջ անմիջապէս յետ Առաքելական կանոնաց՝ դրուած են 32 կանոններ յանուն Ա. Առաքելոյն Թադէքի. թէ և անվաւեր համարուին, այլ կին են, և ի վերջն

գրուած է. «Զայս Օրէնսդրութիւն» եւ Զայս Քարիա աշակերտ Ս. Առաքելոյն Թադէսոսի՝ «զբցի, որպէս լուայ ի նմանէն, ամենայն հաւատացելոց ի Քրիստոս» : Թէպէտ և կ'ըսուի եւս թէ յԵղեսիա գրած ըլլայ, որով ինքն այլ Եղեսիացի երեւել և ոչ ի Հայուակերտական Թադէքի :

Զաքորիայի յաջորդ գրեն մեր վերջին դարու ժամանակազիրք կամ եկեղեցական վեճակագիրք, ինչպէս Յովսէփ Վ. Զայզայեցի, զննենու կամ Զննենուիանու վերոյիշեալն, որ էր յառաջն «Խշան ամենայն ձանապարհանց՝ և հաւատարիմ ի դրան արքունիք» . և

«Էր յոյժ ողորդ՝
«մած բարուքն
«և աղքատասէր,
«դարմանիչ օ-
«տարաց և կա-
«բօսելոց .. (նա
«և) հաւատացե-
«լոցն, և ընդու-
«նող օտարաց»:
Սամուելէն երեք
կամ չորս տարի
վերջը նահատա-
կուած կ'ըսուի
Զեմենտ՝ յԵ-
րուազայ քրմա-
պէտ Հայոց՝ որ
բանաւոր Եր-
ւանդայ եղրացն

էր: — Զեմենտի յաջորդք այլ հրատարակուեցան նորերում, (բայց դեռ կարու ստուգութեան¹). և են Արքելուսն, Մուշէ, Շահնե, Շատար, Ղետենդ. յետին՝ որ միայն չէ Հայանուն՝ որպէս առաջին չորքն (կամ հինգն՝ Զեմենտի հետ), նահատակուած համարի յետ կիսոյ թէ դարու, Հայոց Վաղարշ

1. Այս ստուգուեռու փափագելք լուրն հրատարակեցաւ Լշմիածնի Արքատա օրագրին Ատարէհամարն (1868 եր. 41. 36. 102). իբր թէ, Ստուգանու Սիւնեցին է գալում կիսում՝ դատավանած ըլլայ, և Յավհանէն վարդապետի մի ձեռօք օրինակուած է Պ. Բարին Հայոց (639 Քրիստոսի), Թադէսոի և Բարին դիմուի յաջորդաց՝ աւելի կամ պակաս ցուցակ կամ դաւագնազիր մի. և զայս դաեր է Զայ-

քարիա արքեպիսկոպոս Արտաշու կամ Թադէի զանաց, և օրինակեր է ի ԶՀԹ թուին (1530): Օրագիրն կ'ըսէ: թէ այս յեշատակ գրաւած է երեք կառը մաշւած մագաղաթի վրայ, զոր Գէորգ Գամբուզիոս առեր է ի Կ. Պոլիսի ի Միհրգատանան Թադէսոս բանասիրէ, և հետը ատրած յեշմիածն. ուր ինդրելի և ստուգելի է. զատն զի՞ չարագրութիւնն շատ տեղ անվարդ է և կասկած տայ:

Թագաւորի օրով կամ իր յաջորդին խոսրագուու ասոր ատեն, վկայէ Փերմելիանոս կեռարիոյ եպիսկոպոսն, զոր յիշէ Նորենացի, (Բ. ՀԵ), « Բազում վկայեալու և ի մերում « աշխարհիս » :

Թէ մեր և թէ Ասորոց պատմիչը յիշեն քանի մի ուրիշ աշկերտներ Թադէկ՛ այլեւայ Հայոց գաւառներում քարոզած բնսպէս, Ալքեռու¹ մի (եթէ ոչ Աղդէ), որ քարոզած ըլլայ ի կորմաս, որ են Մեծ Հայոց Կորուաց գաւառներն, և անսնց սահմանակիցքն կամ մասն՝ Մեծ և Փոքր Զար գետոց լեռնահովաներում, զորս Յոյնք և Լատինք Զարդիկեան կոչեն, Տաճdicene. յետ քարոզութեանն Ալքեռու կ'ըսուի գարձած յեղեսիա և հօն գախճանած : — Աղդէ, Արգարու խոյրարարն այլ հօն նահատակուած կ'բռուի, նա և ըստ Խորենացոյ, Արգարու Անես որդուոյ հրամանաւ, որ տարակուասկան է և ոչ Հայկական : — Ուրիշ Աղդէ մի եւս համարուի ի Բարելոն քարոզած, և այն տեղ մեծ եպիսկոպոսական (յետոյ պատրիարքական) աթոռ հաստատած, իրը Ասորեստանեայց, Մարաց և Պարսից քահանայապետ : — Դարձեալ, քիչ այլաձայնութեամբ անուան յիշ Դադիաց աշկերտ մի եւս Թադէսոփ (գոյցէ ամենքն այլ իրենց հոգեւոր հօր անունն ուզած են կրել). որոյ համար կ'ըսէ մեր բազմակնոււ Վանական վարդապետն, թէ՝ « Գնաց Հրամանաւ Թադէսոփ ի Մեծ Հայք և ի կողմնան հիւսիւոյ . և լուեալ զմուն Արգարու՝ զարձեալ և նուու ի Փոքր Սիւնիս, և կրօնաւորեալ ան և գեն ժամկարար վախճանեցաւ, և տեղին շիւոնեցաւ վնաք և յանուան նորա կողեցաւ ». և կոչուի ինչուան հիմայ Դաշի վամբ կամ Խորաց վաեք, Արցախ նահանգի Սիսական գաւառում, որ յայլազեաց Հայնախ կոչուի : — Մօս է ասոր և խադայ կամ Խորաց վաեք, Թագէսոփ խադայ աշկերտին անուամբ, որ և մի յեօթանասուն աշակերտաց Քրիստոսի համարուի : Այս երկու աշակերտաց անուամբք պայծառ վամբեր և եկեղեցիներ շինուած են, և շատ ծաղկած ժբ, ժԳ գարերում, և հիւ-

մայ այլ կանգուն են : — Ոչ շատ հեռի տեղեաւ և անուամբ՝ և շատ աւելի հոչահուած Եւ Եցտարեն կամ Սյոտարեն, նոյն Թագէսոփ վարժարանէն, և քարոզելով նահատակուած ի Մեծ Սիւնիս, և անոր անուամբ կանգնուած հաշակաւոր Ճարենոյ վանքն, որ յետոյ Սիւնեաց արքեպիսկոպոսական կամ մետրապոլիտական բարձրակարգ աթոռն եղաւ, և մինչեւ հիմայ ժանոթ և չէն է . և որոյ վրայ շատ երկար գրէ Օրպեկեան Ստեփանոս մետրապօլիտն պատմի : Սակայն, շատ երկրայական է այդ անձն, ոչ միայն որ յօտարաց չի յիշուիր, այլ և ոչ ի վանականէ, որ բոլոր Հայոց աւետարանիչ Առաքեաներն և Աշկերտները նշանակած է : — Փոխանակ անոր յիշ նա, որպէս և Յայսմաւուրք (սեպա. 29) զեղչէ, աշակերտակից վերնոցն, որ յետ կատարման Ա. Թագէսոփ գնացեր է յերուածացմէ և ձեռնազրուեր ի Տեառնեղրայր Յակովայ, և գառնալով քարոզեր է Աղուանն, մինչեւ ի Դուռն Դարրանատայ (կամ Պահակն Ճորայ) . Աղուանից Գիւս աւենին մէջ զիւաւոր Եկեղեցին շինած է, որ ինչուան հիմայ պատուի իր անուամբ . յետոյ Հայոց մերձաւոր Արցախոյ գաւառներում քարոզերէ Աներան աւանին մօս Զարդումի կոչուած դաշտի մի մէջ նահատակուեր է յանհաւատից, և մարմինն ձգուեր է ցամաք ջրհօրի մի մէջ, ուսուկից հրաշալի յայտնութեամբ հանուելով յամի 488-9, Աղուանից Վաշագան բարքեպաշտ թագաւորի օրով, մօտ այն ջրհօրին յինուեր է Ջրվխիկ կոչուած վանքն, վերոյիշելոց նման ուսկատեղի, ծանօթ այլ ոչ չէն : Ըստ աւանդութեան պատմից Աղուանից Եղիշէի յաջորդեր է Շուրինապիշոյ յերուաղէմէ եկած :

Այսօքան Ա. Թագէսոփ աշակերտաց անուանց և տեղեաց մէջ եթէ աւելի կամ պական շփոթութիւն ինչ կայ, անկասկած է գոնէ անոնց ոմանց՝ Հայոց և Աղուանից միջոցներում քարոզելն . և ոչ անպատճառ՝ Թագէսուն նախակարգի յաւետարանիշս Հայոց աշխարհէ . և ոչ նոյնպէս անպատճառ՝ Հայոց առաջնակարգ եպիսկոպոսական աթոռք գըրուած են Արտաք և Սիւնեան, որոց գտուին հարկ էր ի ժողովի եպիսկոպոսաց ի ձեռնադրութեան կաթողիկոսի : Անտարակայս է եւս, որ Թագէսու և Թագէսուանքոդք


1. Մարիս պատմիչ առ Լըպիէնի, Բ. Le Quien, Orient christianus,

շատ եկեղեցիներ հաստատեր են իրենց քառարութեան տեղերում, զոր սովորական ուսմէօրէն ոնպէ հազար եկեղեցի կ'ըսեն:

Ո. Թագէոսի գերագոյն յիշատակ մ'այլ համարուած է՝ Քրիստոսի սուրբ Կողը բացող հոչակարդն զոր ընգունելով, կ'ըսուի, յառաքելապետէն Պետրոսէ, բերեր է ի Հայու. և հալածանաց առաջին դարուց աւտենի Գառնի աւանին մօտ քարավերանց այրերու մէկու մէջ պահուեր և պատուելու է. յետոյ՝ կէս այն ժայռերուն մասով կէս անոնցմէ զատ քարերով և պատերով՝ քանդակագրդ եկեղեցիներ և վանք շինուած են:

այն տեղ, և մինչեւ հիմայ իրրեւ ուխտատեղիք մեծահանդէս պատուին, և կոչուին Այրից վանք կամ Գեղարդայ վանք իսկ Գեղարդն՝ իրրեւ մի և զերագոյն ի սրբազնից պահուի յաթոս կաթողիկոսին՝ յշմիածին. անպէ կ'օրէնի միւռանն. և մեծ վոանդաց և կարօտութեան ատեն՝ իրրեւ պանծելագործ տարուի հանդիսիւ՝ ուր որ ինդրուած է, ինչպէս երբեմն մինչև ի Վրաստան: Մեր նպատակէն գուրս համարիմք քննել և վիճել՝ թէ ի հոռոմ այլ հոչակուած Գեղարդն որքան հաւանական է ինչպէս Հայոցն:

Միւս նման յիշատակ կամ պարգեւ մ'այլ



Տաթեւոյ վանք.

բերած է ի Հայու՝ Առաքեալն Թագէոս. այն է Շին հարդիան (նարդոս ծաղկի անուշաւազու իւղոյն), որով կին մի մեծահաւատ օծեց զաստուածային զուրի Տեղան մերյ. զայն բերելով Առաքեալն ի կողմանն Տարօն գաւառի, կ'աւանդի թէ վերոյիշեալ Գեղարդը զարկեր է ծառի մի և ջուր րջնեցուցեր. ապա նոյն ծառին փորուածին մէջ պահուեր է Շիշն, հեթանոսաց ձեռք չընկնելու համար: Թէ՝ ժառն իւղոյն անուամբ լցիրդ կամ Եղրդուա-

կոչուած է թէ ոչ, աւելորդ է քննել, բայց կայ այդ անուամբ ծանօթ ծառ, տեսակ մի ու ունի: Աւանդուի գարձեալ, որ Լուսաւորչի ատեն յայտնուեր է Շիշն և շինուեր է ուխտատեղի Եղրդուածի վանք անուամբ, ծուիրեալ Յովի: Մկրտչի, պատուեալ և յիշեալ մինչեւ յաւուրս մեր: Ֆիշատակագիր մի յամի 1676, կ'ըսէ: «Ի հոչակար սուրբ ուխտա Եղրդուածոյ, յերկրին Տարօնոյ, ի գաւառն Մամի: «Կոնեանց կան բագում սրբանչելագործ սրբ-

և բութինք ի սա հաւաքեալ. նոխ, սուրբ
« Նիշ իւղոյն անուշահոտ, զոր Մայսէն նա-
« իստմորգարէն օրհնեաց՝ ի ծագանց հրա-
« շողանից, և օծեաց զմարդարէն, քահա-
« նայն և զթագաւորսն, և Սամուէլ մար-
« գարէն օծ զԹաւիթ և զայլ մարգարէն, և
« կին պոսնիկ զեզ ի մերայ զիլոյն Քրիս-
« տոսի. և Քրիստոս յետ չաշելութեանն
« օրհնեաց և ետ յառաքեալոն, և Ա. Թա-
« դէա բերեալ աստ եղ ի ծան Եղրգի, առ
« սոսրոսազ լերինն Տօրոսի» :

Հ. Դ. Պ. Մ. Ա. Խ. Ե.

Շարայարելի



ԱՅՈՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՌԻԹԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԵՒ Ա. Տ. ՀԱՅԳԱՐԵԱԿ

~~~

(Տես 1899 Սեպտ. Էջ 396. Շար. և վերը)

**Հ**ԱՍՏԱՏԵԼՈՒ Համար մեր կանոնաւ  
յայտնած կարծիքը, թէ յիրափ մի և նոյն  
անձննը են այդ երկու Աստմերն և իրենց  
խմբերն, — այն է Սովերը մէջ զանուած Ա-  
տոմեան վիայը և Փարագեցոյ մէջ իշխաւած  
Առաջ թէ իրեն բնկերը, — բաւական կը  
համարնիք համեմատել հոս անոնց զիխաւոր  
անձննը և պատմուած զիպերուն կարեւոր  
հանգամանկները :

Նախ և առաջ, երկուքին մէջ ալ զիխաւոր  
անձն կը ներկայանայ մեզ Ասոմ զնունի,  
որ մի և նոյն նկարագիրը ցոյց կոս առյ թէ  
Փարագեցոյ մօս և թէ Սովերը մէջ: Եւ  
առենքն հաւատացեալ մ'է և ծշմարիս հայ-  
րենսաւը մը, որ չի զիխեր զիկեւիլ ու և է  
սպանալեաց կամ հրատուրից առջեւ. ան-  
ընկճելի հոփի մը՝ որ վհասիլ կամ թու-  
լանալ չունի զմուարութեանց առջեւ. արժա-

նաւոր ժառանք մը սրտով իրեն նախնայն  
մեծին Ասոմայ զնունւոյ:

Բ. Երկուքին մէջ ալ կը զանենք զԱսոմ՝  
իշխան զնունեաց տահմին. և յիրափ Փար-  
պեցին երկու անգամ՝ «իշխանն զնունեաց<sup>1</sup>»,  
և մի անգամ «աւրն զնունեաց<sup>2</sup>» կ'ըսէ:  
Սովերը մէջ թէ և չենք հանդիպիր այց-  
պիր բացապատճեանց, այլ միայն «յազ-  
գին զնունեաց<sup>3</sup>» կ'ըսէ, ասկայն սկզ մակ-  
վիրն որով կը հոչուի<sup>4</sup>, և մանաւանդ այն  
զերակիշու զերն՝ որ կը արուիք իրեն և իւր  
անուամբ կը կոչուիք բնկերաց խումբն, մինչ  
քան իրենն աւելի ազնուական տոհմեր նախ-  
արանին կային, որպիսի կը՝ օրինակ իմ՝  
«Վարս յիստան տանէ<sup>5</sup>», և այն, յայտ-  
նի ապացոյց մ'է թէ Ասոմ զնունեաց ցեղին  
աւագ նախարար կամ իշխանն էր:

Գ. Փարպեցոյ մօս՝ ամէն աեղ անրա-  
ման և Ասոմ իւր եղրօրէն, որպիս հաւա-  
սար հոգուով և բաջութեամբ ներշնչուած, մի  
և նոյն զրոշին ներբեւ կը կոսին իւր մենին.  
միասին կը հարուածեն թշնամին, ինչպէս  
Ակոս զիշին մօս, ուր Գդիհօն սիմին հա-  
զիւ մապասուր կ'ազտափ իրենց որէն<sup>6</sup>: Նոյն-  
պէս Սովերը մէջ անրաման կը զանենք  
զԱսոմ իւր որդեկէն, մի և նոյն որով և  
արութեամբ ֆառուած, իւրաքու մարտակիցը և  
նահասակակիցը: — Մակայն երկու գեւու-  
րութիւնը կ'եւլան զիմանցիս. նախ, Փար-  
պեցին երկուքն իւրաքու նորաց կ'ըսէ, իսկ  
Սովերը՝ մին որդի միւսոյն. երկորորդ, Փար-  
պեցին Ասոմառմ անսւնը կոս տայ կրտսե-  
րին, իսկ իմ՝ և Յայտնուագր՝ Վարս ա-  
նուամբ կը յիշեն զայն:

Ակաշին գեւուրութիւնը կրնայ հարթուիլ,  
եթէ մատծենք թէ Ասոմայ եղրայրն Ասոմ-  
առմ՝ անշաշաշ շատ մանկահասակ էր, զոր  
զոշակել կոս տայ այն պարագայն, ինչպէս  
կը կարգանք Փարպեցոյն մէջ, որ երբ հայր  
Ակոսուց մօս յաղթեցին Պարսից, իւրեւ ա-  
մենին աւելի թեթեսուն և կայտառ, ինքն

1. Դ. Փարպ. 1873. Էջ 571, 576:

2. Անդ. Էջ 408:

3. Սովերք մի. Էջ 81:

4. Անդ. Էջ 73:

5. Անդ. Էջ 81:

6. Փարպ. Էջ 579: